ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԺՈՂՈՎԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Քրիստոնեության Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամյակի նշման աշխատանքները հետզհետե առավել են ծավալվում: Կենտրոնական Հանձնախումբը, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ և Մեծի Տանն Կիլիկիա Արամ Ա. Հայրապետի (Բ նախագահ) և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքների ատենապետությամբ, ընդհանուր ուղղություն և ոգի տվեց Գործադիր Մարմնին Սեպտեմբեր 1996 թ. Ս. Էջմիածնում գումարված անդրանիկ հանդիպման ընթացքին:

Գործադիր Մարմինը ցարդ ունեցել էր երկու նիստեր և մեկ խորհրդակցական հանդիպում:

Ներկա՝ Սեպտեմբերի 2 և 3-ին Գործադիր Մարմինը գումարեց իր երրորդ նիստը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի:

Երկուշաբթի, Սեպտեմբերի 2-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետը ժողովը բացեց Տերունական աղոթքով և ողջունեց Գործադիր Մարմնի անդամների ներկայությունը Ս. Էջմիածնում և ապա նշեց, որ գոհ է մնացել Փարիզի 14-16 Հունիսի Խորհրդակցական ժողովի արդյունքներից: Հետո հույս հայտնեց, որ այդ ժողովից բխած թելադրանքները ու որոշումները պետք է իրացվեն առաջիկա հինգ տարիների ընթացքում, հատկապես ներգրավելով օտար գիտնականներ, համալսարաններ, գիտական կենտրոններ, և առավելագույնս օգտվել նրանց ընձեռած հնարավորություններից և առավելություններից:

Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ Գործադիր Մարմնի կազմում որոշ փոփոխություններ են մտցվել: Նոր անդամներն են՝ Գերաշնորհ Տ. Գարեգին Արք. Ներսիսյանը և Հոգեշնորհ Տ. Մուշեղ Ծ. Վրդ. Մարտիրոսյանը: Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արք. Աշճյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից և համախորհուրդ Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսի նշանակվել է գործադիր վարիչ՝ հիմնական գրասենյակ ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Վեհափառ Հայրապետը ուրախությամբ հայտնեց, որ գործնական ընթացքի մեջ է Երևանի Մայր Տաճարի կառուցման ծրագիրը, և թե ամենուր, հատկապես Հարավային Ամերիկա իր վերջերս կատարած հովվապետական այցելության ընթացքին նկատել է, որ մեր ժողովուրդը խանդավառությամբ ընդառաջում է 1700-ամյակին, և մի տասնյակ անձեր արդեն իսկ հանձն են առել վանքերի և եկեղեցիների նորոգությանց համար իրենց կարևոր նպաստը բերել:

Վեհափառ Հայրապետի սրտապնդիչ խոսքերից հետո Գործադիր Մարմինը սկսեց իր աշխատանքները հետևյալ կազմով՝

Տ. Մեսրոպ Արք. Գրիգորյան Ա. Ատենապետ
Տ. Օշական Եպս. Զոլոյան Բ Ատենապետ
Տ. Հովնան Արք. Տերտերյան Ա Ատենադպիր
Տ. Մուշեղ Ծ. Վրդ. Մարտիրոսյան Բ Ատենադպիր

Անդամներ՝

Տ. Գարեգին Արք. Ներսիսյան. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆյան, Տ. Սեսան Եպս. Ղարիբյան. Տ. Ասողիկ Եպս. Արիստակեսյան. Տիար Գրիգոր Խանչյան. Վլադիմիր Բարխուդարյան և Խաչիկ Պապիկյան:

Գործադիր Մարմինը իր գումարած չորս նիստերի ընթացքում ընդունեց հետևյալ որոշումները ու եկավ որոշ եզրակացությունների.

Ա. - Գնահատել 1700-ամյակի գրասենյակի բացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Գրասենյակը առայժմ ունենալու է երեք հոգուց բաղկացած անձնակազմ և արդիական բոլոր հնարավորությունները՝ անմիջական կապի մեջ լինելու Հայ Եկեղեցու հոգևոր բոլոր կենտրոնների, առաջնորդությանց և հովվությանց հետ: Լայնորեն օգտագործվելու են համակարգիչները. ունենալու է E-Mail-ի և Internet-ի home page-ի հասցեներ: Շուտով հայտարարվելու են գրասենյակի հեռախոսի, հեռապատճենի և այլ թվերը:

Բ. - Ժողովը լսեց Փարիզի խորհրդաժողովի առթիվ բանաձևված տեղեկագրերի համապարփակ վերլուծումները, որոնք ներկայացվեցին ըստ այսմ.-

Հրատարակչություն - Վլադիմիր Բարխուդարյան
Արևմտյան Հայաստանի և այլ պատմական վանքերի վերանորոգում - Գրիգոր Խանչյան.
Գիտական Համաժողովներ - Տ. Մեսրոպ Արք. Գրիգորյան
Միջազգային ցուցահանդեսներ - Տ. Մեսրոպ Արք. Աշճյան
Ուխտագնացություններ - Տ. Հովնան Արք. Տերտերյան
Հոգևոր կյանք - Տ. Օշական Եպս. Զոլոյան

Գ. - ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԸ

Մեսրոպ Արք. Աշճյանը հայտնեց, որ Օգոստոսի 27-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվել է Հայաստանի առաջնորդների ժողով և ապա համատեղ հանդիպում Պետական Հանձնաժողովի հետ՝ գլխավորությամբ Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Պրն. Գագիկ Հարությունյանի: Սույն հանդիպումների ընթացքում կազմվել է վերջնական ցուցակը այն վանքերի և եկեղեցիների, որոնք առաջիկա հինգ տարիներին անհրաժեշտ է, որ լիովին վերանորոգվեն և ընծայվեն մեր ժողովրդին՝ իբրև ուխտավայր և աղոթատեղի: Առաջնահերթության կարգով նկատի առնվեց Արարատյան թեմից Խոր Վիրապի վանքը իր բոլոր հնարավորություններով և կենտրոնական ուխտավայրի, աղոթքի, հսկումի կենտրոնով և ցուցասրահով: Շիրակի թեմից ներառնվեցին չորս կառույցներ, Գուգարքի թեմից՝ յոթ, Սյունյաց թեմից՝ յոթ, Արմավիրի թեմից՝ երկու, Արագածոտնի թեմից՝ տասնմեկ, Գեղարքունյաց թեմից՝

երկու. Կոտայքի թեմից՝ չորս: Առանձին ցուցակներ պատրաստվեցին Արցախի թեմի համար. ինչպես նաև տարբեր մակարդակի վերանորոգման ենթակա վանքեր և եկեղեցիներ:

Սույն վանքերի և եկեղեցիների նորոգության պարագային ի նկատի առնվեցին մի շարք տվյալներ՝ համախորհուրդ պատմական հուշարձանների պահպանման պետական կոմիտեի պահանջներին. –

- ցարդ կատարված աշխատանքների ընթացքը.
- կառույցները շտապ կարգով փրկելու անհրաժեշտությունը.
- նրանց գործող լինելու հանգամանքը և հնարավորությունը:

Բոլոր վանքերի նորոգության պարագային ի նկատի են առնվելու նրանց պահպանության ամբողջ տարածքը. ինչպես նաև այդ տարածքների բարեզարդման և բարեկարգման աշխատանքները. վանականների և աշխատավորների բնակարանային հարմարությունները: Առաջարկվեցին նաև. Թեմական Առաջնորդների հետ խորհրդակցելուց հետո. Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացնել ծրագիր. ըստ որի վերանորոգված վանքերից ոմանք ունենան հատուկ առաքելություն և կոչում՝ հիմնված իրենց անցյալի ավանդության, ներկա հնարավորության և Հայ Եկեղեցու վերազարթոնքի մեջ իրենց ունեցելիք դերակատարության կապակցությամբ:

Ի վերջո. բոլոր նորոգությանց պարագային հաշվի պետք է առնվեն մեր վանքերի հայկական բնաշխարհի և բնության հետ ներդաշնակումը. բնապահպանական պահանջների հաշվառումը և առհասարակ աղոթական. հոգևոր. կրթական. ուսումնական. տնտեսական և հրատարակչական կոչումները:

Դ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գործադիր Մարմինը քննարկեց այն բոլոր առաջարկները. որոնք վերաբերում են աստվածաբանական. պատմական. մեկնողական. բնագրային. գեղարվեստական հրատարակչության և. պետական հանձնաժողովի հետ համադրելուց հետո որոշ աշխատանքներ. նշտեց Հայ Եկեղեցու հրատարակելիք հատորների հրատարակության սկզբունքներն ու առաջնահերթությունները: Որոշվեց խմբագրությունը մի ՀԱՅ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆԻ. ինչպես նաև ֆառահատոր մի աշխատության՝ որ նվիրված լինի Հայ եկեղեցու դավանության. ծեսին. պատմության. ավանդության և կարևոր բնագիրների: Հրատարակվելու են նաև գիտական թե ժողովրդական գործեր և զբոսաշրջիկային և ուխտավորական գրքույկներ:

Ե. ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածաշրջանների վանքերի և եկեղեցիների նորոգության առընթեր. որոշվեց հատուկ ուշադրության առարկա դարձնել տարբեր երկրներում գտնվող մեր վանքերի նորոգությունները. և համագործակցել միջազգային այն կազմակերպությունների և Համալսարանների հետ. որոնք կարող են զբաղվել և օժանդակել Արևմտյան Հայաստանի վանքերի և Անիի ավերակների պահպանմամբ: Ջանք պիտի չխնայվի նաև նպաստելու Իրանի [illegible]ում գտնվող Ս. Թադեի վանքի վերանորոգության համար:

Զ. ԵՐԴԱՇՆԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ

Գործադիր Մարմինը իր վարիչի միջոցով կապի մեջ է լինելու Հայաստանի Պետական Հանձնաժողովի հետ՝ ներդաշնակելու համար միջազգային գիտաժողովները, ցուցահանդեսները ու գեղարվեստական, հոգևոր, երաժշտության և երիտասարդական փառատոնները: Գործադիր Մարմինը ամբողջովին իր վրա վերցրեց մինչև 2000 թվականը Ս. Էջմիածնում գումարել բարձր մակարդակի գիտաժողով՝ "Հայ եկեղեցու և քրիստոնյա այլ մշակույթների երկխոսություն" թեմայով: (The Armenian Church in Dialogue with Other Christian Cultures):

Է. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Հայաստանի Պետական Հանձնախմբի հետ միասին նախաձեռնվելու են բազմաթիվ ցուցահանդեսներ թե՛ Հայաստանի, թե՛ Ռուսաստանի Դաշնության և թե՛ Եվրոպայի ու Ամերիկայի կարևոր քաղաքների և թանգարանների մեջ: Առաջիկայում կազմակերպվելու են տարբեր թեմաներով ցուցահանդեսներ - "Հայաստան՝ բիբլիական երկիր", "Հույս, հավատ, սեր", "Հայ եկեղեցիների վարագույրները", "Հայ եկեղեցական զգեստներ և տպասք", "Մայրը մանկան հետ", և այլն և այլն:

Ը. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժողովը ընդունեց "Հայաստան՝ երկիր ուխտավայր" թեմայով ուխտագնացության մի հատուկ հայտագիր, որի նպատակը լինելու է մեր ժողովրդի մեջ վերարթնացնել Ուխտի, Ուխտավորի և Ուխտավորության գաղափարները: Այս առթիվ 1997 թ. Օգոստոսից սկսյալ կազմակերպվելու են բազմաթիվ ուխտագնացություններ՝ երկնյուղ զարգացումներով. -

1. Վերարժևորում հայկական սփյուռքի ուխտավայրերի (Երուսաղեմ, Անթիլիաս, Ռումինիա, Ֆրանսիա, Ղրիմ, Տեր Զոր, Վրաստան, Իրան) և դրանք բոլորն էլ պիտի հանգեն Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին ուխտավորությամբ:

2. Հայաստանի ուր թեմերում և Արցախում կազմակերպվելու են ուխտագնացություններ՝ թե՛ զանգվածային փոխադրամիջոցներով և թե՛ հետիոտն կերպով: Ամեն տարի մեկից երկու թեմ պիտի լինեն ուշադրության կենտրոնում, և այդ թեմերում կազմակերպվելու են հոգևոր, մշակութային, գեղարվեստական ձեռնարկներ:

Սույն երկնյուղ ուխտագնացության պսակումը լինելու է 2001 թ. համազգային ուխտագնացությունը, որը զուգակցվելու է Հունիսի 18-ի մեծահանդես տոնակատարության: Այդ տարի երիտասարդական ուխտագնացությունը սկսելու է Հունիսի 1-ին Գանձասարի վանքից, և թե՛ Հայաստանից, թե՛ սփյուռքից երիտասարդ ուխտագնացներ հետզհետե միանալու են ուխտավորական խմբերին, որոնք Գանձասարից առաջանալու են դեպի Տաթև և Հայաստանի պատմական վանքերի ուղիով անցնելու են Հաղպատից, Սանահինից, Գյումրիի վանքերից Անի և ապա Արագածոտնից առաջանան դեպի Օշական և Խոր Վիրապ, ուր Հունիսի 17-ին Ս.

Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէ տոնի առթիվ տեղի են ունենալու բազմաթիվ միջոցառումներ: Նույն գիշերը բազմահազար երիտասարդներ ջահագնացությամբ առաջանալու են դեպի Ս. Լուսավորչի Տեսլական վայրը և Հայոց հավատի բերդը՝ Ս. Էջմիածին, ուր և տեղի է ունենալու արևագալը:

Թ. ՀՈՒՆԻՍ 18, 2001 Թ., ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԿՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀԱՆԱԶՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Որոշվեց առաջարկել, որ սույն թվականը մտցվի քրիստոնեական բոլոր հոգևոր կենտրոնների, Unesco-ի և համաշխարհային և էկյումենիկ կազմակերպությանց օրացույցների մեջ, իբրև պաշտոնական թվական Քրիստոնեության Հայաստանի Պետական Կրոն հռչակման: Իսկ 2001 թ. արդեն իսկ հայտարարել իբրև հոբելյանական տարի հետևյալ ժամանակացույցով.

1. Բացում	– Ս. Մնուանդ, Հունվար 6, 2001 թ.
2. Միջազգային օր	– Հունիս 18, 2001 թ., Տոն Ս. Էջմիածնի
3. Ուխտի ճամփա	– Հունիս 1-18, 2001, Գանձասարից Ս. Էջմիածին
4. Մեռոնօրհնեք	– 29 Սեպտեմբեր 2001 թ., Վարագա Խաչի տոն
5. Երևանի Մայր Տաճարի օծում	– 6 Հոկտեմբեր, 2001 թ.
6. Փակում	– 1 Դեկտեմբեր, 2001 թ., Տոն առաջին Լուսավորչաց, Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի:

Ժ. ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գործադիր Մարմինը բազմակողմանի քննարկումներից հետո հաստատեց ստեղծումը բազմաթիվ հանձնախմբերի, որոնք առաջիկային պիտի հանդիպեն և պատրաստեն իրենց աշխատանքի ծրագրերը, բյուջեն և այլն: Այդ Հանձնախմբերն են. – էկյումենիկ, հրատարակչական, միջազգային համաժողովների, միջազգային ցուցանդեսների, հրատարակությանց, պատմական վանքերի վերանորոգությանց, Հայաստանի վանքերի վերանորոգման, մշակութային ձեռնարկների, հոգևոր երաժշտության, միջազգային փառատոնների, գեղարվեստական և ծիսական-փաստագրական ֆիլմաշարերի, հուշարձանների և հուշանվերների:

ԺԱ. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ

Արդեն իսկ պատրաստվում են մի շարք ձեռնարկներ. –

1. Հիշատակի մեդալ (ոսկի, արծաթ և բրոնզ) – արվեստագետ՝ Ռոմեն Ջուլհակյան,
2. Կրծքանշան և հուշանվեր – արվեստագետ՝ Արմեն Գյուրջյան
3. Էմբլեմ – Կարապետ Փաշայան և Ռուբեն Արուճյան

Առանձին մի էմբլեմ պատրաստվում է միջազգային "Ogilvy and Mather" ընկերության կողմից և 20.000 T-shirt-եր՝ հատուկ մի խորհրդանիշով, որ գործն է Վազգեն Գալայջյանի (ԱՄՆ) :

ԺԲ. ԴՐՈՇՄԻԿ

Գործադիր Մարմնի ընթացիկ բյուջեն ապահովելու և բազմաթիվ ծրագրերի մշակման և զարգացման համար որոշվեց հրատարակել 1.200.000 դրոշմիկներ, որոնք կարելի է գործածել Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ (Christmas seals) և այլ պատեհ նպատակներով: Այս դրոշմիկները գեղեցիկ կերպով պատկերում են ամեն հայի համար Քրիստոսի կենարար խաչը, Ս. Էջմիածինը և Արարատը: Դրոշմիկը ունի հայերեն և անգլերեն հետևյալ բացատրությունը - ՔՐԻՍՏՈՆԵԱ ՀԱՅԱՍՏԱՆ 1700:

ԺԳ. ՔՐԻՍՏՈՆԵԱ ՀԱՅԱՍՏԱՆ - 1700

Որոշվեց հայտարարել Քրիստոնյա Հայաստան 1700 անունով մի պարբերաթերթ, internet-ի վրա և ապա տարածել երկրից երկիր տպագրությամբ:

Այս թերթի նպատակն է 1700-ամյակի բոլոր ձեռնարկները ժողովրդականացնել:

Հուսով ենք, որ Աստծո օրհնությամբ և մեր հարազատ ժողովրդի բոլոր զավակների սրտագին օժանդակությամբ պիտի հաջողեցնենք իրականացնել մեր վրա դրված բոլոր հույսերը:

ԴԻՎԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ

Ս. Էջմիածին
Սեպտեմբեր 10, 1996